բագրի մէջ. «Գերմանիան մանաւանդ իրաւունք ունի պարծենալու իր Մոմզէնով. բայց մի կողմով նա պատկանում է ամբողջ աշխարհին. իւրաքանչիւր պատմաբան, որ ուսումնասիրում է պատմութեան հին շրջանը, Մոմզէնի աշակերտն է: Մենք ամենքս պարտաւոր ենք շնորհակալութեամբ յիշել նրան և կարող ենք սրտանց ցանկալ, որ այդ կեանքը, գիտութեան համար այդքան թանգագին կեանքը, դեռ երկար շարունակվի»:

Ութսունամեայ յոբելեանի օրը Մոմզէն հեռացաւ Բերլինից, որպէս զի ազատվի շնորհաւորութիւններից և օվացիաներից:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՕՐԷՑՕՐ

XXIX

Երեկոյեան թէյից յետոյ՝ դումայի փառաւոր դահլիճում բազմած՝ ինչպէս ցիցէրօններ, ոգեւորված գիշերային չքեղ ընթրիքով կրուժօկում կամ ժողովարանում, մեր քաղաքի մեծայարգ ներկայացուցիչները վճռեցին—բարձրացնել հացի գինը…

Արժէ միթէ դրա համար երկար խօսել. ինչ բան է $1/2$ կոպէկը: Пустяки. «Հարցը պարզ է, քուէարկեցէք, քուէարկեցէք»: Քուէարկեցին և վճռեցին, որ քաղաքի չարքաշ, աղքատ, օրեկան մի քանի կոպէկ վաստակող դասակարգը երրորդ տեսակի հացին $2\frac{1}{2}$ կոպէկի փոխարէն 3 կոպէկ տայ: Դրա հետ միասին էլի մի բան վճռեցին —նոյն իսկ հակառակ ուպրավայի զեկուցման,— որ հարուստ դասակարգը առաջին տեսակի հացին ոչ թէ $4\frac{1}{2}$ կոպէկ տայ, ինչպէս առաջարկում էր ուպրավան, այլ կէս կոպէկ պակաս՝ 4 կոպէկ: Բրավօ, բրավօ…

Եւ երևի այդ վճիռը կայացնելուց յետոյ, դեռ չիջած դումայի սանդուղքներից՝ Սօլօլակի ներկայացուցիչները մոռացան, որ մի քանի օրից յետոյ, շնորհիւ այդ որոշման, քաղաքի աղքատ դասակարգը արտասուք պիտի թափի, անիծելով «քաղաքի մեծամեծներին»՝ այդ հ ր ա մ ա ն ի համար… Մոռացան, որ եթէ կէս կոպէկը փ ո ղ ի է այն մարդկանց համար, որոնք հայրական ժառանգութիւն ստացած, կամ բանկերում բազմած, և կամ փաստաբանական ճարպկութեամբ հազարներ դիզած՝ լուկուլլական կեանք են վարում, նա փողի չէ, այլ դառն քրտինքով ձեռք բերած ապրուստի միակ միջոց արհեստաւորների, բանւորների, մշակների, մանրավաճառների, որբերի և այրիների համար, որոնց թիւը չափ չունի…

Ինչ բան է $1/2$ կոպէկը: Ի հարկէ ոչինչ՝ Սօլօլակի համար, բայց շատ մեծ բան է աղքատի համար: Եթէ մի աղքատ ընտանիք, որ վաստակում է օրեկան միայն 40 կոպէկ, և գլխաւորապէս հացով կերակրվելով,—ով է տուել նրան միս,—առնում է օրը 10 ֆունտ հաց, նոր տակսայով պիտի վճարի ոչ թէ 25 կոպէկ, այլ 30 կոպէկ, ուրեմն աւելորդ հինգ կոպէկ, որ մի ամբողջ կ ա պ ի տ ա լ է չքաւորի համար: Եւ նոյն ն ո ր տակսայով, առաջին տեսակի գեղեցիկ հաց ուտող հարուստը, որ վճարում էր մինչև այժմ ֆունտին $4\frac{1}{2}$ կոպէկ, պէտք է վճարի 4 կոպէկ, պահելով իր գրպանում մի քանի աւելորդ կոպէկներ, ի փառս ձայնաւորութեան:

Ինչ է դա.—արդեօք բարերարութիւն հացագործներին՝ ի հաշիւ քաղաքի աղքատ դասակարգի, թէ շտապով, առանց երկար մտածելու կայացրած մի ա ն մ ի տ վճիռ, որ այնքան սուր գաղափար է տալիս Թիֆլիսի «պարլամենտի» մարդկային զգացմունքների մասին:

Խ. Մալումեան

## ՄՈՍԿՎԱՅԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՆԻՍՏԸ

(Նամակ Մոսկվայից)

—

Շտապում ենք մի քանի տեղեկութիւններ հաղորդել Մոսկվայի Հնագիտական ընկերութեան Արևելեան Մասնաճիւղի վերջին երկու ժողովների մասին: Առաջին ժողովն եղաւ հոկտեմբերի 31-ին, իսկ երկրորդը՝ նոյեմբերի 18-ին: Առաջին ժողովը տօնական էր. այդ օրը լրանում էր Արևելեան Մասնաճիւղի տասնամեակը: Նրա առաջին ժողովն եղել էր 1887 թ. հոկտեմբերի 31-ին: Ժողովը բաց արեց նախագահ պրօֆեսոր Վ. Ֆ. Միլլեր, Լազարեան ճեմարանի նոր դիրեկտորը, որից յետոյ ժողովի քարտուղարը կարդաց ընկերութեան Արևելեան Մասնաճիւղի գործունէութեան մանրամասն հաշիւը: Մասնաճիւղի գործունէութիւնը կովկասագիտութեան կամ կովկասի հնագիտութեան նկատմամբ՝ վերջին տարիները շատ արդիւնաւոր հետևանքների է հասել թէ փորուածքներով և թէ մանաւանդ բևեռաձև արձանագրութիւնների ուսումնասիրութիւններով և վերծանելով: Մասնաժողովը չէ բաւականացել զանազան ժամանակներում գիտնական էկսկուրսիաներ կատարել տալով, այլ և նա հրատարակել է մշակված նիւթեր և ուսումնասիրութիւններ: Բևեռաձև արձանագրութիւնների և կովկասի հնագիտութեան վերաբերեալ՝ նրա հրատարակութիւնները պատկառելի հատորներ են կազմում: Հաշւից տեղեկացանք, որ Մասնաճիւղի գործունէութեանը մասնակցել են և հայ ուսումնասիրողներ, ինչպէս՝ Գալուստ Տէր-Մկրտչեան, Մ. արքեպիսկոպոս Սմբատեան, Գ. Խալաթեան, Մսերեան և ուրիշները:

Հաշւից յետոյ բարօն Շտակելբերգ կարդաց մի զեկուցում՝ «Պարսից ազդեցութիւնը հին հայոց կրօնի վրա»: Պարոնը մի առ մի առաջ բերելով հայկական պանթէօնի անմահներին, ցոյց տուեց նրանց պարսկական ծագումը: Նա մատնացոյց արեց, բացի պարսկական կուլտից, այլ և սովորութիւնների ազդեցութիւնը հայերի վարք ու բարքի վրա: Նա ցոյց տուեց, որ հայ Արշակունիները՝ թէև արդէն քրիստոնեայ, սակայն գտնվում էին հեթանոսական կրօնի ազդեցութեան տակ: Այդ զեկուցումը տպվելու է մասնաժողովի հրատարակութիւնների մէջ, ուստի և նրա մասին խօսելը թողնում ենք ապագային:

Երկրորդ ժողովում կարդացված զեկուցումներն էին. 1) Քիւչիւկ Յովհաննիսեանի՝ «Բասմաճեանի բևեռաձև արձանագրութիւնների առիթով հրատարակած բրօշիւրի և նրա վերծանելու եղանակի մասին». 2) Խախանօվ՝ «Վերջին արևելագէտների ժողովի մասին՝ Պարիզում» և 3) Լ. Մսերեան՝ «Մուշի բարբառի մասին»:

Նախագահ Միլլէր ժողովը բաց անելով՝ խօսեց գերմանական արևելագիտական քառամսեայ հանդէսում հրատարակված մի նոր ձեռագիր թղթի մասին, որտեղ ասված է, թէ ինչպէս Թամերլանն արշաւեց Ռուսաստանի վրա, առաւ Ազօվ և Ղրիմ քաղաքները և արշաւելով Մոսկվայի վրա՝ նրան էլ նուաճեց և այլն,—մի կէս առասպելախառն, կէս ճիշդ թուղթ: Պատմութիւնից յայտնի է, որ Թամերլանը, ճշմարիտ է, արշաւեց Մոսկվայի վրա, սակայն նրան չը հասաւ, և դիմադրութեան հանդիպելով՝ գնաց հարաւ՝ Ազօվի վրա: Պ. Միլլէր ասաց, որ դա 18-րդ դարի գործ է և ոչ Թամերլանի ժամանակից: Դրանից յետոյ, նրա առաջարկութեամբ, Արսէն վարդապետ Ղլտճեան կարդաց Երևանի նահանգի և Կարսի վիճակի հնութիւնների և հին գերեզմանների (կուրգանի) մասին փոքրիկ զեկուցում:

Բևեռաձև արձանագրութիւնների ուսումնասիրութեան Բասմաճեանի եղանակի մասին, Մ. Վ. Նիկօլսկի, որ ասօրագէտ է և վերծանող բևեռաձև արձանագրութիւնների, այն կարծիքը յայտնեց, թէ միակ արժանին այդ երկի մէջ թ ա գ ա ւ ո ր բևեռաձև նշանի վերծանութիւնն է, որ մինչև այժմ չը կար. իսկ մնացած եզրափակումները և կարծիքները հասնում են երբեմն ֆանտաստիքականութեան, որ ոչ մի լուրջ փաստի վրա չեն հիմնված և դէմ են մինչև այժմ եղած՝ հնարաւորութեան չափ իրականութեան մօտիկ՝ վերծանութեան եղանակին:

Որովհետև Պարիզի արևելագէտների ժողովի մասին իր ժամանակին գրվեց «Մշակի» մէջ, ուստի այդ մասը թողնում ենք: Պ. Մսերեանի զեկուցումը չը կարդացվեց, որովհետև ժամանակն արդէն ուշ էր և յետաձգվեց եկող նիստին: Նոյն նիստում Արսէն վարդապետ Ղլտճեան Արևելեան Մասնաճիւղի անդամ ընտրվեց:

Ս.

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

„Մ. Ղ. Ն ա լ բ ա ն դ ե ա ն". կենսագրութիւն. կազմեց Եր. Շահազիզ: Մոսկվա, 1897 թ. 161 երես, գինը 1 ր.:

Կենսագրութիւնը անհատի կեանքի պատմութիւնն է և հեշտ չէ ասել, թէ ինչն է աւելի դժուար գրել՝ մի նշանաւոր մարդու կենսագրութիւն, թէ մի յայտնի շրջանի պատմութիւն: Երկու ընդունակութիւն առանձնապէս անհրաժեշտ են կենսագրողի համար՝ խոր և նուրբ անալիզի ընդունակութիւն և գեղարուեստական ձիրք: Կենսագրողը պէտք է կարողանայ գտնել բաւականաչափ դէպքեր նշանաւոր մարդու կեանքից, ջոկել այդ դէպքերից էականները, որոշել նրանց հիման վրա նրա տեմպերամենտը, նրա ինստինկտները, նրա հայեացքները, լրացնել այդ բոլորը նրա գրուածքների կրիտիկայով, և վերջապէս, վերարտադրել ընթերցողի առաջ նրա կենդանի պատկերը, ցոյց տալով, թէ ինչպէս էին միաժամանակ արտայայտվում նրա հոգու այդ զանազան կողմերը իրական կեանքում:

Պ. Շահազիզի հոգեբանական անալիզը շատ թոյլ է, իսկ գեղարուեստական ձիրք նա ամենևին չունի. եթէ դրա վրա աւելացնենք և այն, որ նրա ոճը, թէև կանոնաւոր, բայց անգոյն է և թմրած, հասկանալի կը լինի, թէ ինչու այդ գիրքը թոյլ տպաւորութիւն է գործում ընթերցողի երևակայութեան և սրտի վրա և նկատելի հետք չէ թողնում նրա յիշողութեան մէջ: Չը նայելով այդ բոլորին, մենք պ. Շահազիզի գիրքը համարում ենք օգտակար աշխատութիւն, ի նկատի ունենալով մանաւանդ այն հանգամանքը, որ այդ գրքում առաջին անգամ հրատարակված են մի քանի այնպիսի վաւերաթղթեր, որոնք բաւական լոյս են սփռում Նալբանդեանի բնաւորութեան որոշ կողմերի վրա:

Տ. Ց.

## ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

—

Նոյեմբերի 17-ին

Էջմիածնից բացակայ լինելու պատճառով ընդհատվեց իմ թղթակցութեան շարքը. այժմ այստեղ լինելով ժամանակաւորապէս, պիտի շարունակեմ նկարել այն, ինչ որ հետաքրքիր է ընթերցողների համար:

Օրվայ խօսակցութեան նիւթը շարունակում է մնալ հանգուցեալ Երեմիա արքեպիսկոպոսը: Մի առիթ էր հարկաւոր երևան հանելու մօխրի մէջ ծածկված կուսակցական կայծը և որբազանի մահը դարձաւ առիթ պահպանողականներին և առաջադիմականներին իրարից ջոկելու: Եւ վանքի պարսպից ներս մտնողի աչքին իսկոյն զարկում է այդ տարբերութիւնը: Ուրախ են լոյսի և առաջադիմութեան դէմ կռւողները, գոհ են յանցաւորները, և չեն կարողանում թագցնել իրանց ներքին աշխարհը, սակայն չը նայելով դրան, ամենքն անխտիր խոստովանում են, որ Երեմիա արքեպիսկոպոսի մահվամբ Էջմիածինը կորցրեց իր հաստատուն սիւներից մինը, և շատերի պատմելով այդ բանը հաստատել է վեհափառ կաթողիկոսը, որ առնելով սրբազանի մահվան բօթը՝ ասել է. «Երեմիայիս մահով ես շատ բան կորցի»: Երեմիա արքեպիսկոպոսը երջանիկ վիճակում վախճանվեց. նա հասել էր իր դիրքի բարձրութեան. նրա առաջ խոնարհվում էին ամենքը, նրա խօսքը դարձել էր հեղինակաւոր բոլոր խնդիրներում: Եւ այս բոլորը ես լսել եմ ոչ թէ Երեմիա արքեպիսկոպոսի բարեկամներից, այլ նրա հակառակորդներից: Մենք ցաւում ենք միայն, որ նա էլի մի քանի տարի չապրեց, երբ գուցէ կարելի կը լինէր շատ բան բարեփոխել:

Երեմիա արքեպիսկոպոսի մահվամբ սինօդի նախանդամութիւնն անցաւ ներկայ եղող աւագագոյն անդամ Սարգիս եպիսկոպոսին: Սինօդում մնացին երկու եպիսկոպոս և երկու վարդապետ. պակասում են երեք անդամ էլ, եթէ ի նկատի առնենք, որ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը՝ Աստրախանի թեմակալ նշանակվելով, իր վրա ունի և սինօդի անդամութիւնը: Պատրաստութիւններ են տեսնվում նոր անդամներ առաջարկելու. հաստատ չեմ կարող ասել թէ ում են առաջարկելու, բայց որքան կարողացայ լսել և իմանալ տրամադրութիւնները, կանդիդատներ համարվում են՝ Մակար եպիսկոպոս, Կարապետ վարդապետ և նմաններ, գուցէ և Մեսրոպ արքեպիսկոպոսը:

X.

## ՆԱՄԱԿ ԽԱՐԿՕՎԻՑ

—

Նոյեմբերի 21-ին

Նոյեմբերի 20-ին տեղի ունեցաւ Խարկօվի հայ և վրացի ուսանողների «Կովկասեան երեկոյթը», որին մասնակցում էին օպերային արտիստներից շատերը: Երեկոյթի հայկական մասը բաղկացած էր երկու խմբական երգերից՝ «Մեր հայրենիք» և «Ջան գիւլում», մի երգից կվարտէտի համար՝ «Խաւար եմ ես», մի երգից սօլօի համար՝ «Արի իմ սոխակ» և մի կենդանի պատկերից: Երևում էր, որ երկու խմբական երգերը շտապով էին պատրաստված: Խմբի մէջ հայերը շատ քիչ էին, մեծ մասամբ օպերային խմբի երգիչներն էին և այդ պատճառով խօսքերը դատապարտված էին կատարեալ այլանդակութեան: Մինչդեռ մէկ մասը երգում էր «Մեր հայրենիք շղթաներով», միւս մասը շարունակում էր՝ «Մեր հայրենիք թշուառ անտէր»: Մենք կարծում էինք, որ այստեղի 50 հոգի հայ ուսանողների մէջ կը գտնվեն գոնէ 20 հոգի, որոնք բարեխղճաբար երկու-երեք հայերէն երգ կը պատրաստեն, որպէս զի թատրօնում եղող փոքրաթիւ հայ հասարակութիւնն էլ փոքրիկ զուարճութիւն ստանայ:—Օպերային չորս արտիստներից և արտիստուհիներից բաղկացած կվարտէտը երգեց «Խաւար եմ ես», իսկ արտիստներից մէկը՝ «Արի իմ սոխակ» բաւարար կերպով: Տենօր Կլեմենտևլի հայկական ռոմանսը, որի մասին տպված էր աֆիշաներում, մենք չը լսեցինք: Կենդանի պատկերը առնված էր թիւրքահայերի վերջին տարիների կեանքից, այդ պատճառով մենք հետաքրքրութեամբ սպասում էինք նրան. բայց ահա բացվեց վարագոյրը, մի փոքրիկ տեղում տեսանք խռնված մօտ 25 հոգի, այնպէս որ պատկերի առանձին մասերը, որոնք գլխաւոր հետաքրքրութիւնն էին կազմում, անցան աննկատելի կերպով, մանաւանդ որ կէս րոպէից վարագոյրը իսկոյն իջնում էր: Կօնցէրտից յետոյ տեղի ունեցան պարեր: Մուտքը մօտաւորապէս 1,000 ր. է:

Լ. Շմաթեան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, նոյեմբերի 24-ին

Խնդրում եմ այս երկտողը տպել «Մշակի» համարներից մէկում իբրև մի նոր փաստ, թէ ինչ անկանոնութիւններ են կատարվում մեր եկեղեցիներում՝ ընտրութիւնների ժամանակ: Անցած կիրակի, երկրորդ անգամ նշանակված էր Ջգրաշէն եկեղեցու երէցփոխի ընտրութիւնը, պ. Գ. Քանանեանցի բողոքով բեկանված ընտրութիւնների փոխարէն: Ինչպէս յայտնի է ընթերցողներին, ընտրութիւնը բեկանված էր նախագահող քահանայ Խարազեանցի կողմից թոյլ տրված անկանոնութիւնների պատճառով: Բայց չը նայած դրան, նախագահ Խարազեան քահանան դարձեալ ուզում էր անկանոն քայլեր անել: Նա այս անգամ բերել էր հետը 1894 թ. «ծխականների ցուցակը», և որովհետև՝ Գ. Քանանեանցի անունը այդ ցուցակում չէր մտցրված, ուստի նախագահը ուզում էր օգտվել դրանից և թոյլ չը տալ, որ պ. Քանանեանց մասնակցի ժողովին: Բարեբախտաբար, ծխատէր քահանան, որ ներկայ էր, հաստատեց թէ պարոնը իր ծուխն է: Այդտեղ երկու քահանաների մէջ պատահեց ընդհարումն: Ծխատէր քահանան ասում էր թէ՝ ն ո ր ցուցակ է ուղարկել, իսկ նախագահը հին ցուցակ է բերել հետը: Երբ այդ միջոցն էլ չօգնեց, նախագահը դիմեց ժողովուրդին հետևեալ խօսքերով. «Ձեր մէջը կայ մէկը, որ չը նայած որդիքը արդէն մեծացել են, բայց չեն մկրտված, և տասը տարի է, ինչ որ նա չէ հաղորդվել. ես այդպիսի ծխականներին դուրս քշել կը տամ»: Ժողովուրդը զայրացած պատասխանեց, թէ ինչ նախագահի գործն է, թէ ով երբ է իր որդիերանց մկրտել, կամ թէ նա ինչպէս կարող է իմանալ թէ ով երբ է հաղորդվել, և պահանջում էր քահանայից՝ ցոյց տալ ընտրութիւններին վերաբերեալ այդպիսի օրէնք: Նախագահը պատասխանում էր, թէ դա եկեղեցական օրէնքն է: Ժողովուրդը պահանջեց, որ արձանագրութիւն կազմվի, թէ ցուցակները հ ի ն են, և ոչ վ ե ր ջ ի ն տարվայ, որովհետև շատերը չեն մտել այդ ցուցակի մէջ և հրաւէրը չէին ստացել: Այսպէս էլ եղաւ և յետաձգեցին ժողովը:

Արդ, հարցնում ենք. միթէ դժուար է քահանաների համար՝ հրաւէրներ ուղարկել ծխականներին: Երէցփոխի ընտրութիւնը հօ ամեն տարի չէ լինում, այլ չորս տարին մի անգամ. Ջրօրհնէքին և Զատկին այդ նոյն քահանաները լաւ են մտաբերում մեզ: Երբ պիտի վերջ տրվի այդ բոլորին. մինչև երբ պիտի ոտնակոխ անեն մեր իրաւունքները. մինչև երբ պիտի մենք խաղալիք դառնանք հոգևորականի ձեռքում: Այդ տխուր փաստը նկարագրելով չենք կարող ուրախութիւն չը յայտնել, որ գոնէ այդ օրը ժողովուրդը գիտակցաբար վերաբերվեց ընտրութեան գործին, և յոյս կայ, որ միւս անգամ այդպիսի անկանոնութիւնները մեր եկեղեցում չեն կրկնվի:

Ա. Շահիկեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, նոյեմբերի 26-ին, Թագաժառանգ Ցեսարեվիչ Գէորգի Ալէքսանդրօվիչի անուանակոչութեան օրը, Թիֆլիսում, բոլոր դաւանութիւնների տաճարներում մաղթանքներ կատարվեցին: Քաղաքը զարդարված էր դրօշակներով և երեկոյեան լուսավառված:

—

Այսօր «Մշակի» հետ ուղարկում ենք ա ր տ ա ս ա հ մ ա ն ի բոլոր բաժանորդներին տ պ ա գ ր ա ծ նամակներ և ծրար եր՝ բաժանորդագրութեան համար: Ա մ ե ր ի կ ա յ ի բաժանորդները «Մշակի» տարեկան գինը, այն է 5 դօլլար, կարող են ուղարկել կամ դօլլարներով կամ բանկային փոխանակագրերով՝ այդ ծրարների մէջ, իբրև պ ա տ ո ւ ի ր ա ծ (Recommandée) նամակ:

—

Էջմիածնի պաշտօնական օրգան «Արարատը» մանրամասն նկարագրում է կովկասեան կառավարչապետ իշխան Գօլիցինի այցելութիւնը Էջմիածնի վանքին, հոկտեմբերի 2-ին: Այդ նկարագրութեան մէջ, ի միջի այլոց, կարդում ենք. «Դրսի դահլիճում, ազգիս ծերունազարդ Հովուապետը սինօդի անդամոց՝ Երեմիա արքեպիսկոպոսի, Արիստակէս եպիսկոպոսի, Վահան և Աշոտ վարդապետների հետ սպասում էր իր Բարձր Հիւրին: Երբ Իշխանը իր ուղեկիցներով մտաւ դահլիճ, Նորին Սրբութիւնը առաջ եկաւ և դահլիճի մէջտեղում խաչակնքեց Իշխանին: Նորին Պայծառափայլութիւնը Վեհի աջն առաւ և յետոյ

